

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N 1060-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N 1060-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ`

1. Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարի 2012
թվականի դեկտեմբերի 21-ի «Չափման միջոցների փորձարկումների և
տեսակի հաստատման կարգը սահմանելու մասին» N 1060-Ն
հրամանում (այսուհետ` Հրաման) կատարել հետևյալ փոփոխությունը և
լրացումը`

- Հրամանի հավելվածը լրացնել նոր 28.1 կետով` հետևյալ
բովանդակությամբ.

«28.1 Շահագործման մեջ գտնվող չափման միջոցի տեսակի հաստատման
սերտիֆիկատի վավերականության ժամկետի ավարտը չի վերաբերվում այն
չափման միջոցներին, որոնք արտադրվել են սերտիֆիկատի
վավերականության ժամկետի ընթացքում: Շահագործման մեջ գտնվող
վերոնշյալ չափման միջոցները ենթակա են Հայաստանի Հանրապետության
տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի 2018 թվականի
փետրվարի 19-ի N133-Ն հրամանով սահմանված կարգով ստուգաչափման:»:

- Հրամանի հավելվածի N Ձև 6-ում շեղակի նշված «խորհրդանիշ» բառը
փոխարինել «Նմուշ» բառով:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը
հաջորդող օրվանից: